

Մեղովկա

Մակերես՝ 14.623 կմ²

Բնակչություն՝ 527

Տնային տնտեսությունների թիվը՝ 189:

Համայնքի կազմում են ընդգրկված են Մեղովկա և Կրուգլայա Շիշկա գյուղերը:

Մեղովկա գյուղը գտնվում է Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 6 կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից 58 կմ հեռավորության վրա:

Մեղովկա և Կրուգլայա Շիշկա գյուղերը հիմնադրվել են 1828թվականին ցարական Ռուսաստանի կայսրուհի Եկատերինայի կողմից արտաքսված ռուս մոլուկանների կողմից և մինչև արցախյան ժողովրդական շարժումը բնակեցված է եղել ռուսներով: Ներկայումս համայնքի բնակչության մեջ մեծ տեղ են զբաղեցնում Ադրբեջանից բռնազաղթվածները և շրջակա գյուղերից վերաբնակիչները:

Բարձրությունը ծովի մակարդակից 1550 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1213 հա, որից՝ 766,5 հա վարելահող, 125,9 հա խոտհարք, 258,2 հա արոտ:

Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և դաշտավարությամբ: Հողերը անջրդի են:

Ցանվում է գարի, ցորեն և կարտոֆիլ:

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, բուժկետ, փոստի բաժանմունք:

Մեղովկա համայնքի Կրուգլայա -Շիշկա գյուղի մոտ կա կապարի հանք, որի հանույթը

կազմակերպելու դեպքում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են ակումբի կիսակառույց շենքի շինարարության ավարտումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: